Հուսիկ Արա

Հետսեր

Քո թողած հեռվից սիրում եմ քեզ
և այնքան մոտ,
որ իրական չէ,
թե կյանքը քեզնից հետո է արդեն:

Քեզ սիրելով սովորեցի ինձ սիրել.
ուրիշ էիր,
ինչո՞ւ դարձար սովորական:
Շնչում եմ՝օդ չէ,
խմում եմ՝ջուր չէ,
ուտում եմ՝հաց չէ.
փնտրում եմ ու չեմ գտնում,
թեպետ ամեն բան իր տեղում է:
Իմ աչքերն ես, որ տեսնում եմ ու չեմ տեսնում,
իմ մարմինն ես, որ զգում եմ ու չեմ զգում,
իմ կյանքն ես, և՛ ապրում եմ, և՛ չեմ ապրում:
Քեզնից առաջ ես եղել եմ, քեզնից հետո ես չկամ.
ինչպե՞ս մեռնեմ, որ ապրեմ առանց քեզ:
Ես կփոխեմ մաշկիս գույնը,
կորն ու գծերը դեմքիս,
արյանս խումբը հավանաբար,
բայց ի՞նչ անեմ, երբ իմ հոգին ես:
Ամենապաղը գրվեց իմ ճակատին՝

պատժվել սիրելով.
չես դադարում մարմին լինել իմ ստվերին:

Քեզնից հետո մոտիկ սիրում եմ քեզ,
երբ քո ավերակներից
էլ չեմ փրկի կորցրած աշխարհը իմ: